ԱԶԳԱՑԻՆ

ԴԱՄԲԱՐԱՆ ԵՒ ԵԿԵՂԵՑԻ

ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՎԲ ԹԱՐԳՄԱՆՉԻ ՅՕՇԱԿԱՆ

Ի մեր թարգմանչաց բազմարդիւն և յոգներախտ անձին սրբոյն Մեսրովբայ Դամբարանը յՕշական գիւղն Սուրբ Եկեղեցւոյ Սեղանի ներքև լինելն քաջայայտ է բազմաց։

Հայկական տառից՝ լեզուի և գրականութեան կատարելագործութիւնը՝ հարստութիւնը և ընդհանուր տարածումն յազգայինս մեր (Հայկ, գրականութեան) ոսկի դարուն, պարտական ենք գլխաւորապէս նոյն անզուգական բարերար Սրբոյ Մեսրովբայ հոգեւոր և քրանավաստակ ջանից և անյողդողդ ճգանց։

Նորին անմահ անուն և յիշատակ արդարև միշտ և յաւէտ պաշտելի և արժանի է անջնջելի իմն կերպիւ քանդակիլ իւրաքանչիւր Հայազնեի երախտագէտ սրտի մէջ, և ցկատարած աշխարհիս պէտք է փառաւորուի առաւելագոյն շնորհապարտ ջերմ զգացմանց հաւատեօք։

Ընդելոյն մէջ երանելի նախնիք մեր քաջ գիտցած են իւրեանց երախտաւորը պատուել՝ այս ինքն նորա դամբարանին վերայ բաւական հոյակապ եկեղեցի կանգնել, որ նոյն Օշական գիւղն այժմեան եկեղեցին է։

Սակայն ոչ ապաքէն համայն Հայազնեայց աննեղելի նախատինք է նոյն երանելւոյն դամբարանին այժմեայն անշուք դրութիւնը և Եկեղեցւոյն կիսաւեր և ողբալի վիճակը. արդեօք զգայուն ազգասիրի սիրտ կներէ՞ չճմլուիլ և աչքեր կհանդուրժե՞ն չփղձկիլ յարտասուս՝ երբ հանդիպին այցելութեան Ս. Մեսրովբայ դամբարանին և Եկեղեցւոյն կիսակործան շինուածոյն ոգեւորոյ տեսարանին։ Արդարև յերկիր մեր ի Հայաստան կան բազում տապանք մեծագործ երանելեաց նախնեաց և աւերակք հոյակապ և նշանաւոր շինուածոց մանաւանդ եկեղեցեաց և վանօրէից, բայց նոցա մէջ տեսնել՝ գիտել Ս. Մեսրովբայ դամբարանը և անզգայ և անտարբեր մնալ՝ ոչ ապաքէն յաւիտենական անարգանաց և նախատանաց արժանի կկացուցանեն զմեզ ներկայ դարուս Հայորեարը, և ո՛չ մի պատճառով չէ հընար մեզ ազատ մնալ ի բասրանաց և յիրաւացի սազտանաց մեր ապագայ սերնդոց և պատմութեան։

Ահա՛ ժամ պատեհ, յորում Ազգ. Հ. և Ազգասէր Հայրապետն մեր նախանձախնդիր եղեալ երանելւոյն Մեսրովբայ չնաշխարհիկ երախտաւորի սիրագործութեանց՝ փառաց և անմահ յիշատակին՝ յաջողած է ձեռնարկել և արդիւնաւորել բազմաժամանակեայ զիլձ սրտին և զգացմանցն՝ կիսաւեր եկեղեցին հոյակապ վերաշինելոյ և դամբարանը ըստ արժանւոյն զարդարելոյ. ուստի Հայրապետական Կոնդակաւ մի յանձնախումբ կարգեց Օշական գիւղացւոցմէ կարևոր պատրաստութիւնքը տեսանելոյ, որպէս զի յառաջիկայ 1873ի գարնան ժամանակ սկսանի շինութիւնը ի շնորհս առատաձեռն նպաստից և օժանդակութեանց մեր սիրելի ազգայնոց։

Ընչո՛ւշտ անձնիւր ազգային՝ իւր սիրոյ մեծարանաց և զգացմանց հաւատի-

քը չպիտի դանդաղէ մատուցանել ի պատիւ Ս. Մեսրովբայ, և յիշեալ նպատակի նպաստելոյ և նուիրաբեր դառնուելոյ փափագողք կարեն իւրեանց կամաւոր նուէրները ուղղել յանուն Սինոդի Սրբոյ Էջմիածնի։ Երգէն Հայազգի ժողովուրդք նոյն գիւղի բաւական նուէր ստորագրած են ի ժապաւինեալ յատուկ տումարին, որ յանձնուած է Հոգաբարձութեան շինութեան։ Նաև Գ. զլաբ քաղաքացի Մեծապատիւ Եղդասէր Մահտեսի Նասայի Իզմիրեան առաջարկութեամբ Վ. Հ. Հայրապետի՝ գրուեցաւ 500 բուբլի, որում արժանի գովութիւնը և շնորհակալութիւնը կ՚փութամք մատուցանել հրապարակաւ Երարատ ամսագրոյս միջոցաւ։

Այնպէս կը գրուատեմք Օշական գեղջ ջերմեռանդ ժողովրդեան եռանդը՝ հանդերձ գոհունակութեամբ, և անշուշտ եմք՝ զի նոքա ինչպէս դրամական նուիրաբերութեամբք նպաստամատոյց կլինին, նոյնպէս և այլ կարևոր միջոցներով շինութեան օգնել երբէք չպիտի դանդաղին։

ՁԵՌՆԱԴՐՈՒԻԼ ՄԱՆԿՈՒՆԻՈՑ.

Ի 15ն ամսոյս՝ ի Վանս Հաւիճոյ՝ Վ. Հ. Հայրապետն ամենայն Հայոց՝ իւր ձեռնասուն աշակերտ Ստեփան Մանկունոյ Պրուսացւոյ,—որ 1868ի երորդ քառորդէն հետէ Մայր Աթոռոյս Ս. Էջմիածնի Տպարանի Տեսչի և Տնօրինի պաշտօնները կվարէ և Տպար. Ժողովոյ Անդամ է, — բարեհաճեցաւ շնորհել կիսասարկաւագութեան և Աւագ սարկաւագութեան աստիճանները, և ի յաջորդ աւուրն ի Պիւրակէի ձեռնադրել կուսակրօն Քահանայ՝ կոչելով զանունն Վահրամ։

Իսկ յերեկոյեան ժամուն ետ վեղար Աբեղայութեան։

Խարտաշիլակն ինչպէս և Պիւրակէ աւուր Պատարագիչն էր Գ. Գ. Գրիգոր Եպիսկոպոս Աղափիրեանց Փոխանորդն Աղեքսանդրապոլ քաղաքի։

ՆՈՒԷՐ.

Նոր— Նախիջևանի Սարգիս Քահանայն Մաքսրմաձեանց՝ իւր աշխատասիրած Հայոց համառօտ Քերականութենէն հարիւր օրինակ նուիրած է յօգուտ Նորաշէն Ս՚ԵՄարանի Մայր Աթոռոյս, որոյ համար կ՚յայտնեմք մեր շնորհակալութիւնը։

Նոր—Նախիջևանի Հայոց Մարդասիրական ընկերութիւնը յատուկ յայտարարութեամբ յանուն Վ. Հ. Հայրապետի խնդրած է հրատարակել հետևեալ հաշիւը անցեալ 1871 ամին ընդ կարգադրութեան Ընդհ. Ժողովոյն,

ՀԱՇԻՒ

Մարդասէրական Ընկերութեան Հայոց Նոր Նախիջևանի վասն 1871 ամի։

Մարդասիրական Ընկերութեան Հոգաբարձուաց Խորհրդարանն համաձայն ԺԵ. յօդուածոյ Կանոնադրութեան իւրոյ՝ պատիւ ունի առաջի առնել Ընդհանուր ժողովոյ անդամոց ընկերութեան, անցեալ 1871 տարուայ մէջ ունեցած մուտքն և ելքն։